

էր, թէ պիտի կարենայ Մովսէս տիրանալ Աթոռին: Բոկոտն Կարմեղեանց այցելուէն, որ այս շրջանին գտնուած էր Սպահան, Եւրոպա վերադարձէն եաքը, 1627 Փետրուար 24ին կը գրէր իւր առ Ս. Ժողովն տուած Տեղեկազրին մէջ. «Հաւանօրէն Մովսէս պիտի ընտրուի Հայոց կաթողիկոս. անիկա այս մասին արդէն ներկայացուցած է Պարսից Շահին խընդրազիր. եւ յոյս կայ թէ երբ Շահը Բաղդադէն վերադառնայ Սպահան, պիտի կատարուի այս խնդիրը» (տե՛ս էջ 337): Այն Ժամանակ, սակայն, Մովսիսի խնդրազիրը իջմիածնի լուսարարութիւնը ձեռք բերելու մասին էր:

Կաթողիկոսական խնդիրը աւելի առօրեայ հարց դարձաւ 1628ին, երբ վախճանած էր Մելքիսեղեկ եւ անոր յաջորդը Սահակ փախտեամբ հեռացած էր Պարսկաստանէն. եւ իջմիածնի Աթոռը մնացած էր թափուր: Այս թուին Պրոսպէր, Սպահանի Բոկոտն Կարմեղեանց մեծաւորը կը գրէր Ս. Ժողովին ի Հոռմ թէ «Հայոց Խաչատուր եպիսկոպոսը ուրիշ եպիսկոպոսներու համաձայնութեամբ Հայաստան եւ Ասորիք քահանայ մ'ուղարկած է, որպէս զի հաւանեցնէ Հայոց եպիսկոպոսները, որ իրենց ձայնը ի նպաստ Մովսէս վարդապետի տան եւ անիկա ընտրուի կաթողիկոս, այն է բոլոր Հայ եպիսկոպոսներու եւ պատրիարքներու գլխաւոր: Այս գործը ի գլուխ հանելու համար նոյն քահանան պիտի հանդիպի նաեւ Կ. Պոլիս եւ Լեհաստանի Հայերուն» (տե՛ս էջ 344):